



Ա Պ Ա Բ Ա Տ

ԹԻՒ Ե. — ՇՐՋԱՆ ԺԵ. 1884 ՏԱՐԻ ԺԵ. ՅՈՒՆԻ 31.

ԿՐՈՆԱԿԱՆ

ԱՅԱ. ԴԱ. Մ. 1952 թ.

ԵԿԵՂԵՑՎԱԿԱՆ ՊԱՇՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ.  
ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ.

68

Խնչպէս ամեն աղդ՝ նոյնպէս և հայ ազգը ունեցել է և ունի կրօն և կրօնական պաշտամունք. ունեցել է և ունի կրօնի համեմատ պաշտօն մատուցանելու տեղ, կրօնի պաշտօնեայ, հետեւաբար և՝ պատմութիւն. Այդ տեսակ պատմութիւնը կոչվումէ Եկեղեցական Պատմութիւն. Եկեղեցական պատմութեան զանազան անձանց մի քանի հրատարակածները կան թէւ, սակայն ինչ ինչ պատճառներով տարագէպ չըհամարեցի մին ևս հրատարակել, հետեւելով մեր մատենագրութեան և ամրող ջայցներով այնպէս՝ որ հնար լինի գործածել իրրե դասագիրք և ընթերցանելի մատեան:

Մեր Հոգ. գլորոցներում ի շաբս միւս առարկաների, եկեղեցական պատմութիւնն ևս ուսանելի առարկայ է. Այդ առարկայի համար ի միջի այլոց կան արդարե Հանդ. Ստեփաննոս աւագ քահանայ Մանղինեանցի. Յովսէփ աւագ քահանայ Օրբելիանի և Յ. Երուսաղեմում հրատարակուած Մ. Վ. Մ.-ի զբքերը, սակայն ուսուցիչները այդ զբքերից հազիւ են օգտվում. իսկ աշակերտները պարտաւորվումն կամ ուսուցչի քերանացի պատմածը յիշողութեամբ մաքներումը պահել և կամ արտադրել. Թէ առաջին և թէ երկրորդ գեպքում աշակերտները և նշն

ինքն ուսուցիչները մեծ դժուարութիւններ են կրում։ Այդ դժուարութիւններին փորձով ենթակայ լինելուց յետոյ կազմեցի եկեղեցական պատմութեան սոյն գիրը, ուր հակառակ մինչև ցայժմ եղածներին բաց թողնելով եկեղեցական մատենագրութեան վերաբերեալ ընդարձակ տեղեկութիւնները, բարւոք դատեցի ուր որ հարկն էր, հայաստանեայց Եկեղեցւոյ ժողովոց կանոնների համառօտութիւնը գնել՝ անկախ պատմութեան ընթացքից, առանձին գլխով, ընդհանուր տեղեկութեան համար։

Այս գրքի մէջ երկար խօսուած չէ աւետարանական պատմութեան և առաքելոց գործերի մասին, որովհետեւ այդ մասը, ըստիս, վերաբերումէ Սրբազն պատմութեան նոր Ատակարանին. երկար խօսուած չէ կրօնի դաւանական խնդիրների մասին, որովհետեւ այդ մասն ևս պատկանումէ կրօնագիտութեան կամ քրիստոնէական վարդապետութեան։ Այս երկը պէտք է պարզ կերպով առանց քննադատութեան ներկայացնէ եկեղեցական վարչութեան պատմութիւնը։

Մեր ազգը ի հարկէ նախ քան քրիստոնէութիւնը ունեցել է մի կրօնական պաշտամունք և կրօնական վարչութիւն. բայց այդ ժամանակի մասին լուելով՝ պէտք է մեր այս, ազգային եկեղեցական պատմութիւնը սկսենք քրիստոնէութիւնից, որով աւելի յարմար էր «Քրիստոնէական Ազգային Եկեղեցւոյ Պատմութիւն» անուանել։

Իւրաքանչիւր պատմութիւն ճիշտ ըմբռնելու համար, պատմական անցքերի հանգամանքին նայելով՝ զանազան շրջանների է բաժանվում. պյսպէս ևս այս Եկեղեցական Պատմութիւնը գրածս ժամանակ լաւ համարեցի չորս շրջան բաժանել։

Առաջին շրջանը պարունակումէ իւր մէջ Սրբար թագաւորից մինչև Տրդատ. Այդ շրջանը մեր եկեղեցու մանկութեան շրջանն է. որի մէջ քրիստոնեայ հայերը համարձակութիւն չունենալով իրանց հաւատը յայտնապէս պաշտել՝ ձորերի մէջ, անձաւներում, սարերի նորշերում, պյուրերի մէջ, բնակութիւններից հեռի, հոգեով և սրտով նուիրուած իրանց սկզբունքին, ճգնումէին, կազդուրվում և պատրաստվում աւելի ևս քաջութեամբ դիմադրել և պատերազմել կուպալաշութեան դէմ։

Երկրորդ շրջանը պարունակումէ իւր մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչից մինչև Հայրապետական Աթոռի Ս. Էջմիածնից տարագրուիլը և Ս. Առդանանց պատերազմը։ Այդ շրջանը մեր եկեղեցու երիտասարդութեան շրջանն է, որի մէջ Հայ հայրապետներն ու եկեղեցականները շատ սակաւ բացառութեամբ ամեն ջանք գործ էին դնում եկեղեցին պայծառացնել զանազան բարեկարգութեամբ, զրականութիւնը ծաղկեցնել կրօնական և պատմական ընտիր ընտիր հեղինակութեամբ և թարգմանութեամբ։

Երրորդ շրջանը Հայրապետական Աթոռի տառապանաց շրջանն է։ Այդ շրջանի մէջ Հայրապետական Աթոռն ու Հայրապետը երկրի աւե-

բածութեան և բարբարոսների սրածութեան երեսից տարագիր և առանցքական, հետեւելով ժաղավրդին՝ փախազրվումէր այնտեղ, ուր յոյ կար անդօրրութեան և այս մինչև Կիրակոս Վիրապեցաւ ընտրութիւնը, որով Հայրապետական Աթոռը նորից փախազրուեց Ա. Էջմիածին:

Երբորդ շրջանը պարունակումէ իւր մէջ Կիրակոս Վիրապեցու ընտրութիւնից մինչև Գէորգ Դ. Կաթուղիկոսի վախճանը: Այդ շրջանի մէջ Հայրապետական Աթոռը աղղի վայրավատին գաղթականութեան պատճառով և երկիրը անմարդաբնակ լինելուն համար խեղճութեան և թշուառութեան մէջ էր: Գրականութիւնը որ այնքան ծաղկած էր հոգևորականների մէջ, ոկսել էր հետզհետէ վայր ընկնել և աղուացուել, որի Ներկոյացուցիչ համարվումէին Կրետացի Արքայամ Կաթուղիկոսի և Զաքարիա սարկաւազի պէս մատենագիրները: Անեթիրը և նոյն նկն Ա. Էջմիածինը յետին աղքատութեան մէջ էին ընկել և շատերը սկսել էին ամայանալ: Ա. Էջմիածինի Մայր Աթոռը պարտքի տակ հեծումէր և նշաւակ էր գարձել տիրող մահմետական իշխանների ձեռքին, մինչև որ Պուտաց տէրութիւնը տիրելով Արարատեան աշխարհին Ա. Էջմիածինը իւր հոգանաւորութեան տակ առաւ և միջաց տուեց հետզհետէ բարեկարգուելու և Հայրապետական Աթոռի անուան արժանի զիրք ստանալու:

Աղդային Եկեղեցական Պատմութիւնո գրան ժամանակ աչքի առաջ ունեի բացի Հանդ Ակը, Արդ. Չամչեանի եռահատոր պատմութիւնից, մեր հին և արդի մատենագրութեան մէջ յայտնի Երկասիրութիւնները ըստ բաւականի, որոնք երբեմն երբեմն յիշուած են ծանօթութեան մէջ:

Իմ ջանքս եղել է որչափ կարելի և ժամանակագրութեան ճշտութեան հետեւել, իսկ պատմութիւնը համառօտել այնպէս՝ որ ոչ ընդարձակութեամբ ձանձրոյթ բերէ և ոչ կրծատութեամբ՝ հետաքրքրութեան բաւականութիւն ըստայ: Թէ որչափ կը յաջողի ինձ այդ՝ ըրդիտեմ: Եթէ չըյաջողի ևս գոնէ զրգիռ կըտայ աւելի ճարտարագունին՝ լրացնել և յարմարացնել աղղային պատմութեան այս ճիւղը, և այս ես բաւական է ինձ:

Ինչ ինչ պատճառուներով բարւոք զատեցի սոյն Երկասիրութիւնո շարունակաբար տպագրել Արարատ ամսագրում, յուսալով միանգամայն լոել բանասէր ընթերցողների կարծիքը, որի ուղղագտատութեան ըստ անենայնի հպատակելու տրամադրութիւն ունենալով:

## ԳԼ. Ե.

Քրիստոնէական Եկեղեցւոյ Հիմնադիրն է Յիսուս Քրիստոս, որ ձնուեց Հրէատանակի Խէթզիհէմ քառագրում Ա. կըս Սարբամից: Յիսուսի մարմնառութեան ժամանակ Հրէատանը գտնիսումէր Հռովմայեցւոց գերիշխանութեան տակ. մարգարէից գուշակութեան համեմատ՝ ժամանակն էր Մեսիայի գալստեան և Խօրայէլի փրկութեան, ուստի շատերը աշխատումէին իբրև մեսիաց ընդունուել, իսկ ժողովուրդը ում մէջ ունումէր մի արտաքոյ կարգի շնորհչը, համարումէր թէ նա կըսինի Մեսիան: Հենց այս ժամանակներն էլ Յովհաննէս Մկրտչի մկրտումէր և քարոզում և շատ հետեւդիեր ուներ: Յիսուս ևս երեսնամեայ հասոկում Յովհաննէս Մկրտչից Յորդանան գետում մկրտուելոց յետոյ, ոկտեց քարոզել Գալլիխայի և ամբողջ Հրէատանի մէջ: Նու յանդիմանելով փարփառեցների և դպիրների, ծերերի ու օրինականների անսրբի գործերը, քարոզումէր Տարբառակրոն-նիւն, Եղիայրակրոն-նիւն, Հշմացիտ ասպառաջալարո-նիւն և ողբաժան-նիւն:

Յիսուս Քրիստոսի խօսքերը ուելի ներգործումէին մանաւանդ այն ժամանակ, երբ նա Հրաշքներ էլ էր գործում. և այսպէս ոչ միայն հետեւդիեր, այլ և իւր աստաւաճային փարփառեառութիւնը ունեցաւ քարոզովներ ևս, որոնք կոյուեցին առաջեւալ:

Յիսուսի Քրիստոսի քարոզութեան պատճառով՝ նախանձու ներգործիա, քարառէր և շահամոն քահանայապետներն ու դպիրները Յիսուսին կորցնելու համար՝ նորան մասնեցին Հռովմայեցւոց իշխանութեանը որպէս քաղաքական յանշաւոր, միայնելով թէ նա ինքն իրան Հրէից թագուար է անուանում և ժողովրդին մալորեցնումէ ու զրգուում Հռովմայեցւոց գէմ: Հռովմայեցւոց կողմից գատառուոր կարգուած Պոնտացի Պիգմանոր, այս ամբատանութեան համար երբ Յիսուսին հարց ու փորձ անելով տեսաւ թէ ոչինչ այնպիսի մի բան լրկայ կամեցաւ արձակնել, բայց Հրէից ժողովուրդը զրգուած քահանայապետներից դպիրներից ու փարփառեցներից ոկտեց աղաղակել և Պիղատոսին առել, եթէ Յիսուսին արձակես, կայսեր քարեկամ յես, որովհետեւ նու ինքն իրան Հրէից թագաւոր է անուանում: և ով որ իրան թագաւոր կանուանի, հակառակ է կայսեր: Պիղատոս պարտաւորուեց Յիսուսին իրեւ քաղ-

քական յանցաւորի՝ խաչի գառապարտել. և ըստ սովորութեան՝ որ յանցանիքը զրումէն յանցաւորի խաչի վերայ՝ Յիսուսի խաչի վերայ և զրել տուեց. «Յիսուս Նողոյիքի՝ թագաւոր Հրէից» :

Յիսուս իւր մահուան երրորդ օրը յարութիւն առան և քառասուն օր երկրիս վերայ մնալով՝ երբեմն երբեմն երեւմէր աշակերտներին և քաջակերում՝ Խւր յարութեան քառամներորդ օրը իւր աշակերտների հետ միասին բարձրանալով՝ Զիթենեաց առը տալով աշակերտներին առաքելութեան իրաւոնք, միսիթարելու ու շնորհը տալու համար խառանալով ուղարկել. Ա. Հոգին՝ համբարձուեց երկինք և նստաւ Հօր Աստուծոյ աջ կողմը: Առաքեալները Ա. Հոգու շնորհքը ընդունելուց յետոյ ցրուեցին զանազան աշխարհներ իրանց առաքելութեան պաշտօնը կատարելու և քարոզելու ու մ կրտելու Հօր, Արքու և Սուրբ Հոգու անունով:

Յիսուսի մարմնառութեան ժամանակ՝ Հայաստանն ևս Հռովմացեցւոց գերիշխանութեան տակ էր, և Հայոց թագաւորն էր Արգար քաջ և իմաստան Արշակունի թագաւորը: Երբ Արգար տեսնելով Հռովմացեցւոց անտոելի ամբարհաւաճութիւնները Պարսից դաշնակցութեամբ կամենումէր Հռովմացեցւոց լուծր թօթափել, լոեց որ Պարսից Արշակի Արշակունի կամ Պահլաւիկի թագաւորը մեռնելով, գահակալութեան համար խռովութիւն է ծագել նորա որդւոց մէջ, գնաց Պարսկաստան խռովութիւնը դադարեցրեց, բայց վերադարձն անրուժելի հրանդութեամբ տկարացաւ: Հրէաստանի թագաւոր Հերոսդէս արգէն թշնամութիւն ունենալով Արգարի գէմ՝ Հռովմացեցւոց գործակալների կասկածը ևս առառել ուստկացրեց, հաւատացնելով որ Արգարի Պարսկաստան գնալը Հռովմացեցւոց գէմ՝ դաշնակցութիւն կազելու համար էր: Արգար որպէէեւել միջոց չունէր իւր մոտպրութիւնը կատարելու, Պաղեստինէ, Հռովմացեցւոց Մառնոս լշխանի մօտ գեսպաններ ուղարկեց յայոնելու որ՝ ինքն զնացել է Պարսկաստան ոչ թէ ընդգէմ՝ Հռովմացեցւոց դաշնակցութիւն կազելու, այլ իւր աղգուկոց թագաւորի որդւոց մէջ խաղաղութիւն հաստանելու: Այդ դեռպանները Երաւաղեմում տեսան Յիսուսին՝ որ Հրաշքներ էր զրծում, և քարոզութիւն անում, լոեցին որ Հրէից մեծամեծները գժգոհ էին Յիսուսից և կամենումէին սպանել առուստի՝ երբ վերադարձն՝ պատմեցին Արգարին ինչ որ տեսել և լուլ էին Յիսուսի մասին: Արգարը հաւատալով թէ այնպիսի

սքանչելիք գործող Յիսուս Քրիստոս կամ Աստուած է կամ Աստուածոյ որդի, որ եկել է մարդկիներին վրկելու, հրաւիրեց իւր մօմ՝ իւր մայրաքաղաք՝ Եգեսիայում՝ հանգիստ ապրելու և իրան բժշկելու:

Յիսուս Քրիստոս թէել ինքն չըկարողացաւ գալ Եղեսիա, բայց նամակով երանելով Արգարի հաւատը խռատացաւ իւր աշակերտներից մէկը ուզարկել նորան բժշկելու և Հայերին քրիստոնէական հաւատաց լուսով լուսաւորելու:

Ա. Հոգւոյ գալուսից յետոյ Յիսուսի խստաման համեմատ Թագէոս առաքեալը ՅՅ թ. եկաւ Եղեսիա, բժշկեց Արգարին, քարոզեց, և Արգարին բոլոր քաղաքացւոց հետ մկրտեց: Արգարի հրամանով կռոց տաճարների գաները փակեցին, բազիների և սրոների վերայ եղած հեթանոսական պատկերները ծածկեցին. և թէել առափառնիք յըկար, բայց հաւատացեալները օր աւուր բարձմանումէին:

Թագէոս առաքեալը Եղեսացւոց վերայ մետաքսագործ խոյրաբար Ագգէին Եպիսկոպոս ձեռնադրելուց յետոյ, Արգարի հրավարտակով գնաց Հայաստանի զանազան կողմերը՝ քրիստոնէութիւնը քորոշելու: Թագէոս Արգարի հրովարտակը ձեռքին հասաւ Վերին Հայք, ուր մկրտեց տեղոյն կուռակալ Արգարի քեռորդի Սանատրկին իւր ընտանիքով և ամբողջ Շաւարշան կամ Արտազ գաւառի բնակիներին, և եպիսկոպոս ձեռնադրելով Գաբարիս անուն մի հաւատացեալի՝ ինքն գնաց Ազուանից աշխարհը քարոզելու:

Խոկ Արգար բացի նորանից՝ որ իւր աշխարհի քրիստոնէութիւնը ընդունելու պատճառ գարձաւ, երկու թուղթ գրեց Հռովմայեցւոց Տիրերիս կայսեր, զանգատելով՝ որ Հրէայք ջարտարեւամբ Յիսուսին անպարտ տեղը խաչեցին: Թուղթ գրեց նաև Սոսրեստանի Ներսէչ և Պարսկաստանի Արտաշէս թագաւորներին, յորդորելով՝ որ քրիստոնէութիւն ընդունեն և թոյլ տան Քրիստոսի առաքեալներին ազատ քարոզութիւն անել: Արգար գեռ իւր թղթերի պատասխանը լըստացած ՅՅ տարի թագաւորելուց յետոյ Քրիչի ՅՅ թուին մեռաւ: Նորան յաջորդեցին Եղեսիայում՝ իւր որդին Անանուն, խոկ Վերին Հայաստանում՝ իւր քեռորդին Ստիատրուկ:

Արգարի մահից յետոյ քրիստոնէութիւնը ոկոնց հետդիետ:

թուլանալ, նախարարները առ ահի ընդունած լինելով քրիստոնէութիւնը, նորից կռապաշտութեան մէջ ընկան, և Սանատրուկ ակնածելով նախարարներից՝ հետեւեց նոյնաց (1):

Անսանուն նոյնպէս ուրացաւ քրիստոնէութիւնը և երբ առաջարկեց Ագդէ եպիսկոպոսին իւր համար խոյր շինել ու նա յանձն չառաւ ասելով թէ, իմ ձեռքերը կռապաշտ թագաւորի համար խոյր չեն շինիլ, Անսանուն բարկացաւ և նահատակել տուեց:

Նախարարները և թագաւորները ի մանկութենէ մնուած լինելով կռապաշտութեամբ, գիւրեաւ չէին կարող հրաժարուիլ այն բոլոր հեշտութիւններից, որոնց արգելք էր լինում քրիստոնէութիւնը: Ա. Թագէոս Աղուանից աշխարհում իւր առաքելութեան պաշտօնը կատարելով անցաւ Կապագովիիս, ուր եպիսկոպոս ձեռնազրելով իւր Թէոփիլոս աշակերտին, երբ գառնումէր Հայաստան՝ ճանապարհին նորան հանդիպեցին Հռովմայեցւոց գեսպանները ուրոնք գալիս էին Սանատրկի մօտ, գեսպանների գլխաւորի անունն էր (Խրիւսի) Ասկի, ուստի և գեսպանութիւնը կոչվումէր Ասկիեան: Ասկեանք լսելով Ա. Թագէոս առաքեալի քարոզութիւնը, հաւատացին և մկրտուեցին: Ա. Թագէոս քարոզելով և իւր հաստատած եկեղեցիներին այցելելով՝ հասաւ նաւարշան կամ Սրտազ գուառը: Այդ տեղ շատ քրիստոնեանների և նոյն ինքն արքայագուստը Սանդուխտ Ա. կուսի հետ նահատակուեց Քրիստոսի 48 թուին, 15 տարի Հայաստանում առաքելութեան պաշտօն կատարելուց յետոյ:

Ա. Թագէոս առաքեալի և Ա. Սանդուխտ կուսի մարմինը հաւատացեալները ամփոփեցին նաւարշան գաւառի Սանատրուկ կոչուած գաշտի մի բլրակի գագաթի արեւմտեան կողմը մի մեծ վէմի տակ (2):

### Ա. ԹԱԳԷՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ.

Հայաստանեայց եկեղեցւոյ ժողովոց հաւաքածոյի մէջ Ա. Թագէոս առաքեալին վերագրած 29 յօդուածով հարց ու պատասխանի ձեռվ մի օրէնսդրութիւն (3) կայ: Այդ սահմանադրութեամբ Ա. Առաքեալը որո-

(1) Խոր. գիրք Բ. գլ. Լ. Պ.

(2) Ատորագրութիւն կաթ. էջմիածնի Շահմաթունեամ. հատ. Ա. երես 146.

(3) Պատմ. Ժողովոց գլ. Ա. երես 9 - 18. գործ Աթէլ Առքեպիսկոպոսի:

շելով եպիսկոպոսի պարտքը, նղովաւմէ նոցա, որոնք կամ կաշառք պատճառով, կամ մերձաւորութեան և բարեկամութեան համար տգետին եկեղեցու առաջնորդ վերակացու կը կարդեն, և կամ ինչեւ շնորհ կարժանանացնեն, Պատուիրումէ որ եպիսկոպոսները բոլոր հաւատացեալներին միապէս, հաւասար իրանց քոյրերին ու եղբայրներին՝ սիրեն, կաշառ ամենեին չառնեն, առանց խորհրդակցութեան բան չանեն, Եւրաքանչիւր գաւառի և քաղաքի վերայ տեսուց կարգեն, մեծ գիւղերում երկու կամ երեք քահանայ և մի սարկաւագ, իսկ փոքր գիւղերում մի քահանայ և մի սարկաւագ կարգեն, Հաշմանգամներին քահանայ չըձեռնազրեն, առանց քննութեան, առանց վկաների ու ժողովրդեան հաւանութեան քահանայ չըձեռնազրեն, համարելով որ սորանից մահարեր վնասներ կը ծնեն:

Պատուիրումէ ՅՈ տարեկաններին քահանայ և սարկաւագ ձեռնազրել, ՅՈ տարի ԷԼ թոյլ տալ նոցա իրանց պաշտօնը շարունակել. յիսուն տարեկանից մեծերին չըձեռնազրել ոչ քահանայ և ոչ սարկաւագ. ՅՈ տարեկաններին չըմոյլատրել ամուսնանալ, համարելով որ այդ ժամանակ անձն ու միտքը տկարանալ է սկսում:

Առաքեալլ եկեղեցու սեղանը խաչաձև քարից պատրաստել օրինազրելով՝ պատուիրումէ. Նշխարը պատարագի օրը պատրաստեն և խաչաձև զրոշմելով՝ եփեն, մաքուր ամանի մէջ պահած գինին սեղան հանեն և ոչ չըյանդգնի բաժակի հետ ջուր խառնել, համարելով որ այն Աստուծոյ հաճելի չէ:

Սեղանը հաստատելուց յետոյ պէտքէ եպիսկոպոսը քահանաների սարկաւագների և ժողովրդոց հետ ազօթի զգաստութեամբ, արտասուրով սաղմոսներգութեամբ ու Ա. Աւետարանի ընթերցմամբ և ապա պատարագ անի. Երբ որ սեղանը կը հաստատի, պէտքէ զուարակներ, արջառներ և ոչխարներ մորթել\*), ինչպէս Սողոմոն արեց տաճարի շինութեան ժամանակ. Եկեղեցում պէտք չէ քրթմնջել և միմեանց նայել. ոչ մի բան չըպէտքէ խօսել բացի աղօթքից. երեսը գեպ ի արևելք պէտքէ կենալ և ձեռքերը բարձրացրած՝ խնդրելով արդարութիւն և Աստուծոյ պատրաստած արքայութեան արժանանալ:

Ժ. ՐԴ Յօդուածից սկսած. իրատներ են եպիսկոպոսների քահանաների և ժողովրդեան բարեկեցութեան համար. և իւրաքանչիւր յանցաւորին, ըստ յարմարագատութեան, պատիժ է սահմանուած. Ա. երեմիշած սահմանազրութիւնը Հայաստանեայց եկեղեցին ընդունել է

(\*) Այս պատուերը սրբութեամբ կատարվումէ, եւ շատ հարկաւոր է. զան զի եկեղեցու օծման նաւակատիքը մեծ հանդիսով եւ զանազան տեղերից եկած ժողովրդեան ներկայութեամբ է կատարվում. որոնք հոգեւորապէս միիթարուելոց յետոյ, նիւթազէս եւս յադենութեն պատրաստած կերակրով եւ ուրախութեան ու ցնծութեան տօն կատարելուց յետոյ դառնութեն իրանց տեղերը.

և գործադրումէ որչափ հանգամանքները ներումեն, բացի ի ԻԹ րդ յօդուածից՝ որով պատռւիրումէ առաքեալը քառասնորդաց պահքը պահէլ բացի շաբաթը և կիւրակէ օրերից:

Ա. Խոսքեալը իւր պատուերները տալով՝ ասումէ ժողովրդին. Հայրեր և եղբայրներ, զուք որ Տիրոջը յանձնեցիք ձեր անձը, այս ինձանից ձեզ, և ձեզանից յետոյ եղողներին օրէնք լինի. Հաստատ կացէք այն ամեն բանի մէջ, որ ինձանից լսեցիք. մի անցնէք այդ սահմանից, որ ձեզ բարիք լինի և երկայնակեաց լինիք. Այս խօսքերը ձեզ մօտ յիշատակ լինին. մի մոռանաք ձեր աղօթքներում, Ազատ մնաք չարի փորձանքից. Խաղաղութիւն ձեզ հետո.

Ահա մանագրութիւն վերջանումէ հետեւալ բառերով. «Զայս օրէնը սպազրութիւն ես Զաքարիա աշակերտ առաքելոյն Թափէսոսի գրեցիւրդէս լուսայ ի նմանէ, ամենայն հաւատացելոց ի Քրիստոս».

948

Աբգարի որդին և յաջորդը Անանէ կամ Անանուն հինգ տարի հազիւ թագաւորեց Հալածելով քրիստոնեաներին և նահատակելով, մինչեւ որ միանգամ իւր պալատում կճեայ սիւն կանգնայնելիս, սեան յանկարծ վայր ընկնելովն տակը մնաց և մեռաւ. իսկ Սահատրուկ, որ Աբգարի մահից յետոյ Վերին և Միջին Հայաստանի վերայ թագաւորեց, և իւր գայեւակ քաջ Բագրատունիների և Արծրունիների աջակցութեամբ զօրաժողով էր լինում բոլոր Հայաստանին տիրել՝ սուանց պատերազմի հասաւ իւր նպատակին. որովհետեւ Եդեսիայի բնակիչները Անանէի մահից յետոյ խոստացան Սահատրուկին ընդունել, և թէ նա քրիստոնեաներին ցի Հալածիլ, իսկ Սահատրուկի թէեւ խոստացաւ, բայց յետոյ զրժեց իւր խոստամանը: Նա ոչ միայն քրիստոնեաներին սկսեց Հալածել, այլև կոտորեց Աբգարի տան բոլոր արուներին. աղջիկներին բնակեցրեց Հաշտենից կողմերում, իսկ Աբգարի Հեղինէ կնոջը որից շատ բարիք էր տեսել, Միջագետքի տիկնութիւնը յանձնելով, բնակեցրեց Խառան քաղաքում: Բայց Հեղինէ թագուհին ջրկարողանալով տանել կուռագաշտ ժողովրդի խրժգժութեանց՝ գնաց երուսաղէմ, և սովոր ժամանակ ժողովրդին մեծամեծ բարիքներ արեց. նա իւր բոլոր գանձ ըը ծախսելով՝ Եղիպտոսից ցորեն քերել տուեց և բաշխեց կարօտեալներին և մեռաւ ու թագուհից Երուսաղէմում\*) :

(\*) *Imp. quibus si q. L. lib.*

Մինչեւ իրերը Հայաստանում այսպիսէ գրութեան մէջ էին և քրիստոնեաները հալածվութենին, քարոզութեան պաշտօնավ հետզհետէ Հայաստան եկան Յ. Բարդողիմէոս, Ա. Թովմաս ու Յուղա — Թագէոս առաքեալները և երուսաղէմում Յակոբը Տեառն եղրօրից եպիսկոպոս ձեռնազրուած Եղիշէ՝ որ շատ մարդիկ աշոկերտելով Քրիստոսի տւետարմնին և մկրտելով՝ 70 թուին նու հատակուեց Աւտի նահանգում:

Ա. Բարդողիմէոս առաքեալը երկոտասամնիցն էր. Նու առաջն անգամ Թովմաս առաքեալի հետ քարոզութեամբ Հայաստանից անցնելով գնացել էր Հնդկաց աշխարհը. վերագարձած լինելով Հրէաստան՝ Մարիամ Սուրբ կոյսի մահից յետոյ, 49 թուին նորա պատկերը հետն տռած՝ նորից եկաւ Հայաստան, սկսեց քարոզել հաւատացեալներին իրախուսել և հաւատացելոց թիւը բաղմայնից Ո. Բարդողիմէոս տեսնելով Անտառկի խստարտութիւնը, աճաւ Պարսկաստան, այնտեղ եւս յաջողաւթիւն ըրգտնելով, նորից վերագարձաւ Հայաստան՝ Աղբակի, Նախիջնանայ և Գողթնեաց կոչմերը. հաւատացեալների վերաց եպիսկոպոս ձեռնադրեց Պարսկա մնկերից քրիստոնեութիւնն ընդունած իւր Կոմիտ աշակերտնն և թողեց ալիթնեաց Ագուլիս աւանում, իսկ ինքն Յակովէեան Յուղա — Թագէոսի հետ գիշերելով 0թեաց Խաչ կողուած տեղը (ըստ ոմանց Խոր-Վիրապի բրիգ վերաց է) անցաւ Ներ և Զարեւանդ գաւառներն ու Անձեւաց կողմերը՝ ամենայն տեղ քարոզելով՝ և հաւատացնոց թիւը շատացնելով։ Ա. Բարդուղիմէոս Տիգրիս գետի եղերքում Կանգուար ամուր բերդին մօտիկ շինել մի փոքրիկ տաճար, այնտեղ հաստուեց Աստուածամօր պատկերը և ժողովնելով հաւատաւոր կանայք և կոյսեր՝ նոյն գլխուոր կարգեց Յուսիկ անունով մի իշխանի Մարիամ քրոջը<sup>(\*)</sup>, իսկ ինքն սկսեց իւր քարոզութիւնը շարունակել Ստորին Հայքում. շատերին քը քրիստոնեաց գարձրել որոյ մէջնաեւ Անտառուկ թագաւորի Ագուլի կամ Թագուհի քոյրին ու հազարապետը Անտառուկ երբ լսեց այս իւր քրոջ հետ շատերին նահատակեց, իսկ Ա. Բարդուղիմէոս Առաքեալին մորթեղերծ անել և խայել տուեց Արեբանոս քաղա-

(\*) Թուղթ Մովսէսի Խորենացւոյ առ Սահակ Արծրունի. Մատեն. Մովսէսի Կոբեցւաց. տպեալ է Վենետիկ. յամին 1843. երես 295.

քում, — այն աեզ, որ յետոյ Ս. Առաքեալի անունով Բարդուղիմ կար Բարձր կոյսութեց, իսկ այժմ Աղբակէ է կոչվում:

Բայցի Թաղէսս և Տարգուղիմէնս Ա. Առաքեալներից Հայաստանում քարոզեց նաև Ա. Թաղէտ առաքեալի աշակերտ Եւստաթէնս կամ Ստաթէն, որ Եպիսկոպոս ձեռնադրուելուց յետոյ քարոզեց Արքունիք աշխարհում և այնուղ էլ նահատակուեց։ Եւստաթէնս կամ Ստաթէն համարվումէ եօթանանից մէկը և Թաղուած է Տաթէնում։

Թաղեան և Յարդուղիմն առ Առւրբ առաջեալներից յետոյ հաւատացեալների հոգեւոր պէտքերը հոգալու համար յաջորդեցին միմեւանդ

<sup>4)</sup> Մեծ Հայքում հետեւալ եպիսկոպոսները \*

Ա. Զորաբիս Եղիսկոպոս, որ Թաղէսոս առաքեալի հետ Հայաստան եկաւ 33 թուն՝ և Արտազի Եղիսկոպոս ձեռնադրուեց, — Ա. Թաղէսոս առաքեալի մահից յետոյ 12 տարի ես Հովուեց իւր հօտը և 70 թուն նահատակ մեջ երուանդ Բ. Թագաւորից:

Բ. Զեմենտոսս որ բոլոր ճանապարհների վերայ հսկող էր կարգուած և Սանատրուկի թագաւորի հաւատարիմն էր երբ խը զահճապետ եղբայրը Ա. Թագէոս առաքեալին նահատակումէր, եղած հրաշքները տեսնելով՝ քրիստոնեայ զարձաւ, և Զաքարիայի մահից յիտոյ յաջորդեց նորան։ Զեմենտոսս խը եպիսկոպոսութեան պաշտօնը ամենայն սրբանաւորութեամբ վարելոց յիտոյ, 79 թւուին նահատակուեց Երուանդ Բ. թագաւորի եղբայր Երուագքրման ետից։

Գ. Կոմնի եպիսկոպոս, ազգով Պարսիկ էր և մոգ, Պարսից Խո-  
րասան քաղաքից։ Սա իւր եօթն ընկերներով Ա. Բարդուղիմէոս  
առաքեալի հետ Պարսից Խորասան քաղաքից եկաւ. Հայաստան  
և կարգուեց Ա. Առաքեալից Ագուլխում Գողթնեայ եպիսկոպոս-  
երը Ա. Առաքեալը գնաց Հեր և Զարեւանդ գաւառները, Կոմնին  
իւր մի քանի ընկերների հետ քարոզումէր և օրբստօրէ աւե-  
լացնումէր Հայաստացելոց թիւր։ Կոմնի 67—90 հովուելով իւր

(\*) Ա. Թագէսու առաքելութիւնը յաջորդող եպիկովումների պատմութիւնը քաջու ծօրէն հանուառն է Եմահ - Խաթունեանի Ստորագը. Ա. Հատորից.

ժողովուրդը, մեռաւ Ագուլիսում։ Նորա գերեզմանի վերոյ շինուած փոքրիկ մատ ու ը մինչեւ ցայսօր էլ ուխտատեղի է։

Դ. Բաբելաս \*), ազգով Պարսիկ, Ա. Յարելուղիմէսս առաքեալից իւր ընկերների հետ Գողթնեաց գաւառի այցելու կարգուած լինելով՝ Առմանի մահից յետոյ 90 թուին յաջարկեց նորան և վախճանուեց 120 թուին։

Թէև Բաբելասով ընդհատվումէ Գողթնեաց եպիսկոպոսութեան յաջորդութիւնը, բայց քրիստոնէութիւնը հաստատ հիմն էր բռնել այդ գաւառում, իսկ քրիստոնեաները խոյս տալով աշխարհից և նորա բռնութիւնից ու հրապոյրներից՝ անտրատնջ կերպով միայնակեցութեամբ էին անցնում իրանց օրերը Պարուալեռների մէջ ճգնելով, քարոզելով և ուսուցանելով \*\*)։

**Բ.** Վերին Հայքից գուրսա, Հայոց Միջագետքի Եպիսկոպութեան յաջորդութիւնը, բայց քրիստոնէութիւնը հաստատ հիմն էր պատասխանեալին յաջորդեցին հետեւեալ եպիսկոպոսները։

Ա. Աղդէ, որին Անանէ նահատակեց, երբ առաջարկեց նորան իւր համար խոյր շինել, իսկ նա պատասխանեց. «Ամ ձեռքերը կռասպաշտ թագաւորի համար խոյր չեն շինիլ»։

Բ. Տուրիսաս, սա առաջին անդամ իւր տունը ընդունեց Ա. Յաղէսս առաքեալին երբ նա եկաւ Եղեսչա Արքարին բժշկելու համար։ Սո Աղդէի մահից յետոյ յաջորդեց նորան. և 91 թուին Հռովմայեցոց Դամետիանոս կայսեր՝ ընդ գէմ քրիստոնէից յարուցած հալածանքի ժամանակ շատ տանջանքներից յետոյ նահատակուեց։

Գ. Բարսումա Հայկազն եպիսկոպոս Եպիսկոպի, Տրայիանոսի օրով (108—120), սա երբ ծերունի Սարբիւզոս քրմին և նորա Բաւէս քրոջը քրիստոնեայ գարձեց, շատ հեթանոսներ էլ քրիստորիստոնեայ գարձան։ Սարբիւզոս քրմին և նորա քրոջ հետ նահատակուեցին շատերը, և սաստիկ տանջանքներ տալուց յետոյ երբ որ կախարանի վերայ երկաթի քերաններով քերումէին Բարսումայի մորթը, քրիստոնէից ազատութեան հրամանը արքունիքից հաս-

(\*) Օրբել Պատու. Աիւնեաց տպագ. Հայնակարեան ի Փարէկ երես 62.

(\*\*) Օրբելեան պատու. Աիւնեաց Խանահատի վանքի պատմութիւնը արած ժամանակ՝ յիշումէ որպէս թէ նո դժուկ է վանքի արձանագրութեանց մէջ. որ վանքը շինուել է Հայոց թուականից 400 տորի առաջ. Միիթաք մնունով մի վանականի շեռքով (որին եւս կարելի է Աիւնեաց եպիսկոպոս համարել) մատ 150 թ. Քրիստոսի.

նելով՝ արձակուեց, և այսպէս նարաւ մա աղաստիլով՝ սկսեց աւելի եւս աղաստութեամբ քարոզել, մինչեւ որ խորին ծերութեան մէջ 120 թուին վատսնանուեց:

Եղեսիսյի եպիսկոպոսների յաջորդութիւնը շարանակուեց մինչեւ Ա. Գրիգոր Լուսաւորիչ, որոնց մէջ յիշվումն

Դ. Կոն եպիսկոպոս 291—295 \*):

Ե. Ակակիոս եպիսկոպոս Տիգրանակերտի՝ 250—280, որ նոյնակս կարելի է յիշել ի շարս Եղեսիսյի եպիսկոպոսների:

Զ. Աքքեղայոս եպիսկոպոս Միջագետի, 260—280:

\*♦♦ Փոքր Հայքի Կեսարիա քաղաքում՝ Ա. Թագէոս առաքեալին յաջորդեցին հետեւեալ եպիսկոպոսները.

Ա. Թէոփիլոս եպիսկոպոս, (40—70), սա Թագէոս առաքեալի հետ շրջաւմեր քարոզելու Քրիստոսի Աւետարանը և նորանից Կեսարիսյի եպիսկոպոս ձեռնադրուեց \*\*):

Բ. Զոթիկոս եպիսկոպոս Փոքր Հայոց Կոմանա քաղաքի 160—190 թ., ոս գրով և թշթթով ընդդիմացաւ Մոնտանոս հերձուածողին՝ որ ոլատիւ վաստակելու համար սկսել էր մարգարէանալ եկեղեցու վարդապետութեան հակառակ: Զոթիկոս մեռաւ նահտակութեան մահուամբ:

(\*) Ճահ - Խաթունեան, Ստորագը, Արար, Ա. Հատ, երես 157, առումէ, « Արմասը կոն եպիսկոպոս յիշատակի ի հին ճառընտրի գրանցի մեծի Աթոռոցի ի ճառի անդ Նմոնաց կամ Սամոնաց եւ Գորիա կամ Գուրիասայ, որպէս ի սկզբան ճառին նոյնպէս եւ ի վախճանին, իւ սկսուած ճառին է ըստ պյամ, » Յամի վեց հարիւրորդի Հագետաներորդի Աղէքսանդրի Մակեդոնացւոյ՝ որ է այ ութերորդ իւազաւորութեանն Դիոկղետիանոսի, որ թուգուրորեաց զինն եւ տառն ամ, . . . յամաւորութեան պիտկոպոսի ԱւաՀայի, արար Դիոկղետիանոս հալուծումն քրիստոնէից յամենովն տեղիս իշխանութեան իւրայ, . . .

(\*\*) Ճահ - Խաթունեան Ատոր, Արար, Ա. Հատ, Եր, 153, առնելով Յովսէփ Քաղաքաց կարծումէ որ Ա. Գուկոս աւետարանիցը սորան է ուղղել եւր աւետարանը (Գուկ, ԳԵ, Ա. 3) եւ Գորեք տապաքելոցի մէջ յիշուած Թէոփիլոսը սու Անի՛ որ Պաղեստինէում գումարուած ժողովի մէջ գլխաւորն էր:

— Պաղեստինէի ժողովը (ըստ Եւսեբեայ Եկեղ, Պատմ, Դար, Ե. Գլուխ) գումարուեց Զատիկի տօնի համար, ոմանք պնդումէին թէ Հրէից Պատիքի հետ լուսնի 14 լն, որ օրը եւ պատահի պէտքէ տօնիւ Յիսուսի յարութիւնը, բայց ժողովը որոշեց Սիւշաբաթի (Կիւրակէ) օր միայն տօնել, ժողովի գահերէց էին Թէոփիլոս Կեսարիս (Պաղեստինէի) եպիսկոպոս եւ Նարկիսոս Երուսաղեմացւոց եպիսկոպոս: Աւել եպիսկոպոսների հետ էին նաեւ Պոնտացւոց եպիսկոպոսները, որոնց գլխաւորն էր Պալմայ որին Ա. Վարդապետ Մուրատեան Ա. Թագէոս եւ Բարդուղիմէոս առաքեալներին յաջորդող Հայոց եպիսկոպոսների շարքումն է գնում:

Գ. Աղեքսանդր Եպիսկոպոս Գամբաց. սա բաւական ժամանակաւայեալներին հովուելուց յետոյ գնայ Երուսաղէմ և ծերունի Նարկիսոս Եպիսկոպոսի հետ վարումէր Երուսաղէմայւո Եպիսկոպոսութեան պաշտօնը 210—230 թ., երկու անգամ Կեսարիայի (Պալեստինէի) գառառորի առաջ գառուեց և հաստատ մնալով իւր հաւատովն՝ բանտարկուեց ու բանտի մէջ էլ վախճանուեց:

Դ. Մեհրուժան Եպիսկոպոս Հայոց (250—280, Տրդատի հայոց Մեծն Խոսրովից նահատակուեց ուրիշ շատ քրիստոնեաների հետ:

Ե. Պարմելիսանոս կամ Փիրմիլիսանոս. սա իւր անձանձիր և եռանդուն աշխատութեան համար 230 թ., նշանակուեց Կապագովիկիայի Կեսարիա քաղաքի հաւատայեալներին Եպիսկոպոս. Պօղոս Շամշտայու գէմ \* ) գումարուած ժողովում գոնուեց, և շատ հալածանքների տանելով՝ 270 թուին մնուած խաղաղութեամբ:

Զ. Կղենէսս կամ Կղէնիսս Եպիսկոպոս Կեսարիայի, զինայելով յարուցուած սարսափէլի հալածանքներին՝ ամենայն եռանդով կատարումէր քարոզութեան պաշտօնը 272—290 թիւը, և նահատակուեց Դիոկղետիանոս կայսեր ժամանակով:

Է. Վլասիս Եպիսկոպոս Սեբաստիայի 290—315. սա Սեբաստիայի կողմերիցն էր և ժողովրդեան միարերան ընտրութեամբ ձեռնազրուեց Սեբաստիայի Եպիսկոպոս: Վլասիս շատ չարչարանքների և տանջանքների տանելով՝ իւր անդրդուելի հաստատամութեամբ շատերի քրիստոնեայ դառնալու պատճառ եղաւ. և 315 թ. գլխատուեց Սեբաստիայից դուրս:

Թ. Ղեռնդիս Եպիսկոպոս Կեսարիայի (292), մեծ հալածանքի ժամանակ շատ նեղութիւններ կրեց: 302 թ. սուրանի ձեռնազրուեց Ա. Գրիգոր Լուսաւորիչ՝ Հայոստաննեայց հովուապետ: Ղեռնդիս Եպիսկոպոս գտնուեց նաև Նիկույ տիեզերական Ա. Ժողովում:

Ա. Թաղէսս Առաքեալին յաջորդող Եպիսկոպոսական երեք աթոռները հաստատուած էին

Մեծ Հայքինը՝ Արտաշ գաւառում և Գողթնեաց Ագուլիս աւանում: յայտնի են միմեանց յաջորդող չորս Եպիսկոպոսների

(\*) Պօղոս Շամշտայի կամ Աստմատայի ասումէր թէ Ք. իսուսոս մարդկուցին թնութիւնից ոչ լինչով աւելի է:

անուններ։ Միջագետքինը կամ Ստորին Հայքինը՝ Եղեսիա և Տիգրանակերտ քաղաքներում։ յայտնի են հինգ եպիսկոպոսների անուններ։ Խո՛լ Փոքր Հայքինը՝ Կեսարիա և Սեբաստիա քաղաքներում։ յայտնի են ութին եպիսկոպոսների անուններ։

Արգարի յաջորդները մինչև Տրդատ թագաւորը, թողնելով քըրիստոնէութիւնը՝ կռապաշտութեան մէջ ընկան և սկսեցին հաւածել քրիստոնեաններին։ իսկ եպիսկոպոսները այցելում ին հաւատացեալներին, քարոզում ու խրախուսում էին և իրանց նահատակուելով աւելի ուժ ու զօրութիւն էին տալիս իրանց հօտին։

Քրիստոնեանները լըկարողանալով յայտնի համարձակ պաշտել իրանց իրօնը, լեռների մէջ, ձորերում և ալրերում ապրում և ազօթում էին, և այսպէս քրիստոնէութիւնը անընդհատ և անսահան մնաց մինչև Ս. Դրիգոր Լուսաւորիչ։

Բաց ի բազմաթիւ նահատակներից և Սանատրուկ թագաւորի արքայրադուարը Սանդիստից ու Թագուհի քրոջից, Հայ քրիստոնեայ նահատակների մէջ նշանաւոր էին Ռոկեանք և Սուքիասեանք։

Ռոկեանք առգէն յայտնի է որ, երբ Հռովմից գեսպանութեամբ գալիս էին Սանատրուկի մօտ՝ ճանապարհին հանդիպելով Ս. Թագէոս առաքեալին՝ լսեցին նորա քարոզութիւնը, հաւատացին և մկրտուելով Ս. առաքեալին՝ իրանք ևս սկսելին քարոզել։ Համելով Արարատեան նահանգը՝ բնակուեցին Ծաղկէոյ սարում։ Ս. Թագէոս առաքեալի մահից քառասուն երես տարի յետոյ Ռոկեանք, որ արգէն ծերացել էին, իջան Արտաշատ քաղաքը և սկսելին քարազել Քրիստոսի Աւետարանը, որին, որիների հետ հաւատացին Արտաշէս Բ. թագաւորի Սամէնիկ կնոջ Սլանաց երկրից եկած ազգականները, որոնք հետեւելով Ռոկեանց՝ նոցա հետ առանձնացան Ծաղկէոյ սարը, և Եփրատի (Արածնիի) ակոնքում մկրտուելով՝ իրանց գլխաւորի—Սուքիասի անունով կոչուեցին Սուքիասեանք։ Սրուաշէս թագաւորի սրբին Արտաւազդ գայրանապով այս բանի վերայ, 107 թուին նահատակնեց Ռոկեանց։ Յէւ ի պահ իւ Սամէնիկան շատ հնարք գործ զրին Սուքիասեանց նորից արքունիք յետ բերելու, սակայն նոքա տեսնելով Ռոկեանց նահատակութիւնը, մերժելով մերժեցին արքունեաց հրաւէքը և առանձնացան Զրաբաշխ կամ Սուկաւ լեռներում։ Տեղի խոնաւութեան պատճառով՝ Սուքիասեանք ուեա-

ցած և մազոտուած լինելով՝ քօշ\*) էին կոչվում և 130 թուին նահատակուեցին:

Ս. Թադէսս առաքեալին վերագրած կանոններին նայելով՝ Հայոց նախնական կամ՝ առաքելական գարու եկեղեցին բաւական կազմակերպուած է եղել և եկեղեցւոյ խրաքանչիւր անդամի պարագը որոշուած։ Հեթանոս՝ Հայերով շրջապատուած և կռապաշտ թագաւորներից հալածուած քրիստոնէութիւնը տեւեց մինչեւ Ա. Գրիգոր, աւելի ևս հալածանք կրելով Մեծն Խոսրովից և Տրդատից՝ որ մինչեւ խր քրիստոնէոյ գառնալը, երկու հրովարտակներով սաստիկ հալածանք հանեց ընդդէմ քրիստոնէից։

( Աը Հայութակուն ) :

Յ. Վ. Մ.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՏԱԿԱՑՄԱՆ ԿԵԱՆՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ.

### ՓԱՐԵԶ

( Յորականի մշակում ու Արքայություն - Զ. )

Փարիզեցու վարքի և բարքի առանձնայատկութիւնները նկարագրելլ այնպէս հեշտ չեւ այստեղ ըստ կարեւորութեան բաղադրիչ զանազանութիւնները աւելի ակներեւ և չափազանց են. պարապմունքները, մասնագիտութիւնները, կեանքի պայմանները այր մարդկանց վերայ զնումնեն իրանց կնիքը, Այս պատճառաւ, օրինակի համար, վեր առնենք հարուստ բուրժուայի ընտանիքից երիտասարդ տղամարդ, որովհետեւ նա ոչ մի գործի պատշաճած չէ, ուրեմն Փարիզեցու ցեղական յատկութիւնները նորանում աւելի է երկում, քանիմէ ուրիշներում, նա ձիշտ այնպէս է, ինչպէս ամէն մէկ սիրուն կին ունի սահմաննեալ ժամանակը յար ոչ ու մասնակը յար ոչ ու մասնակը մասներիմ բարեկամներին է ընդունում, եւ ի՞նչով է զանազանվում նա սիրուն կնոջից, Ի հարկէ նա այնպէս գեղեցիկ չէ, բայց բոլոր մնացեալ յատկութիւնների մէջ չըկայ զանազանութիւն։ Նորա պարապմունքը համարեալ թէ նոյնն է երր նա հոգս և անում իւր զարդարանքի, կաչ կարասիների, երեկոյեան ինջոյըների

(\*) Բովհաննէս կաթուալիկոս Գրաստանակերտցի. տպան Մոսկվայում 1853 թ. հրիս 22 — 23: